

# ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅՎԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## Թաթուկ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԱՅԼԸՆՏՐԱԼՔ Հետազոտական կենտրոնի ղեկավար  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, ագրարային քաղաքականություն, մթերումներ, տնտեսություն, տնտեսական զարգացում

Անկախացումից ի վեր Հայաստանի գյուղատնտեսությունը գտնվում է լրջագույն փորձությունների շրջանում: Տնտեսվարման նոր պայմաններում այդպես էլ չի ստեղծվել այն համակարգը, որը թույլ կտա լավագույնս օգտագործել գյուղի և գյուղատնտեսության ներուժը:

Մեր համոզմամբ, նման համակարգի ձևավորման կարևոր քայլերից մեկը կարող է դառնալ մթերումների համակարգի ձևավորումը և իրական գյուղկոոպերացիայի կազմակերպումը, ինչն արդեն ընկալվում է լայն շրջանակներում: Մենք հեռու ենք այն մտքից, որ դա նույնն է, ինչ նախկինում գործող Հայկոոպի համակարգի վերականգնումը: Նախ, փոխվել է մի ամբողջ կացութաձև և վարչահրամայական մեթոդներն անհամադրելի են բաց և մրցակցային տնտեսության հետ: Երկրորդ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և աշխատանքի կազմակերպման ժամանակակից մեթոդները նոր հնարավորություններ են ընձեռում ավելի արդյունավետ համակարգի ձևավորման համար: Ընդամին, նույնն է մնում նպատակը՝ հնարավորինս լավ կազմակերպել գյուղմթերքների արտադրության ու սպառման գործընթացները, նպաստել գյուղացու կենսամակարդակի բարձրացմանն ու երկրում պարենային անվտանգության ապահովմանը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, մեր համոզմամբ, անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ հիմնական քայլերը.

- Հայաստանի բոլոր մարզերում ստեղծել մթերման կենտրոններ՝ աշխատող խանութների ցանցով և կից պահեստային տնտեսությամբ;

- Ձևավորել գյուղմթերքների արտադրության և սպառման գործընթացներին առնչվող կենտրոնացված տեղեկատվական համակարգ՝ հանրապետության բոլոր համայնքներում առկա և սպասվող բերքի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվությամբ, ինչպես նաև բնամթերային փոխանակման, գյուղմթերքների առևտրի և ոլորտին առնչվող այլ տեղեկատվության փոխանակման և օգտագործման արդյունավետ մեխանիզմ:

- Գյուղերը պետական պատվերի համակարգի մշակում, հատկապես երկրի պարենային անվտանգությունն ապահովող ճյուղերի և ենթաճյուղերի արտադրանքի կայուն և կանխատեսելի իրացման նպատակով;

- Գյուղացիական տնտեսությունների աջակցման ազգային ծրագրի մշակում և դրա հետևողական իրականացում /ներառյալ՝ ցածր տոկոսով վարկերի տրամադրում, ոռոգման ջրի վարձի, հողի հարկի, այլ վճարների գծով գյուղացիական տնտեսությունների ֆինանսական պարտավորությունների մի մասի բնամթերային հաշվանցման և այլ հնարավորություններով/;

- մասնագիտական խորհրդատվություն՝ գյուղմթերքների արտադրության արդյունավետ կազմակերպման և դրանց իրացման հարցերով;

- գյուղացիական տնտեսությունների արտադրած ապրանքների շուկայական ուսումնասիրություններ /ներքին մարքեթինգ/՝ հանրապետության ողջ տարածքով մեկ;

- արտերկրում տեղական գյուղմթերքների իրացման հնարավորությունների բացահայտում և արտահանմանն աջակցություն /արտաքին մարքեթինգ/;

- առավել մեծ պահանջարկ ունեցող և արտահանման ուղղվածության գյուղմթերքների առանձին ծրագրերի պետական համաֆինանսավորման մեխանիզմի ներդրում;

- երկրի պարենային անվտանգության ապահովման նպատակով սերմնացուի, պարարտանյութի, թունաքիմիկատների տեսքով պետական սուբսիդավորում;

- սննդի անվտանգության ապահովման նպատակով համապատասխան լաբորատորիաների հիմնում մարզերում և սննդի անվտանգության ապահովման հարցերով զբաղվող բոլոր երեք կառույցների՝ ՀՀ Գյուղատնտեսության, ՀՀ Առողջապահության և ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունների համագործակցության ծավալում /ներկայումս հիշյալ նախարարությունների միջև գործողությունները համադրված չեն/;

- մթերումների համակարգը սպասարկող անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորում /սառնարանային տնտեսություն, պահեստներ և այլն/;

- շարունակական բնույթ կրող գյուղմթերքների տոնավաճառների կազմակերպում՝ մարզերում և Երևանում:

Մթերումների համակարգի ձևավորումը պետք է լինի ՀՀ Կառավարության տնտեսական գերակայությունների շարքում: Այն ուղղված է

ոչ միայն գյուղթերքների արտադրության ճիշտ և ռացիոնալ կազմակերպմանն ու դրանց իրացմանը, այլև գյուղում աղքատության մակարդակի հետևողական կրճատմանը՝ աշխատատեղերի ստեղծման և եկամուտների ավելացման միջոցով, ինչպես նաև տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Հայկոպը սխալմամբ վերագրվում է խորհրդային տնտեսվարմանը, սակայն այն բաժնետիրական սկզբունքների վրա հիմնված արտադրության կազմակերպման առավել հաջողված ձևաչափ է:

Հարկ է նշել, որ Հայկոպը ստեղծվել է 1904 թվականին՝ Մեղրիում որպես սպառողական կոոպերացիան կազմակերպող կառույց, միաժամանակ նպաստելու առևտրի կազմակերպմանը:

Տասնյակ տարիներ, անկախ տնտեսվարման ձևերից, Հայկոպի ցանցը դյուրացրել է գյուղթերքի իրացումը՝ կոոպտորգի խանութների ցանցով՝ քաղաքներում: Գործել են Հայկոպի համակարգի հիսուն խանութերևանում, "Արմենիա" խանութը Մոսկվայում, Հայկոպի ենթակայության տակ են եղել Հայաստանում գյուղթերքների բոլոր շուկաները: Հայկոպի միջոցով իրականացվել են մթերումներ՝ կաշվի, բրդի, դեղաբույսերի, ձվի և այլն՝ համապատասխան գրասենյակներով և սպանդանոցներով: Հայկոպի համակարգում գործել է նաև բրդի նախնական վերամշակման կոմբինատ՝ Արարատում, իսկ քսանութ գործարաններում կազմակերպվել է հացի արտադրությունը, ինչպես նաև դպրոցական սնունդը:

Հատկանշական է, որ խորհրդային միության գերկենտրոնացված համակարգում, երբ արտաքին առևտուրն իրականացվում էր մասնագիտացված մենաշնորհային կառույցների միջոցով, ՀԽՍՀ որոշ ապրանքների արտահանման մեծ մասը կազմակերպվել է Հայկոպի կողմից:

Հասարակական սննդի համակարգը եղել է Հայկոպի ցանցում, ներառյալ Սևանի Աղթամար համալիրը, Հարսնաքարը, այլ ռեստորաններ: Գործել են մեծածախ առևտրի բազաներ Սպիտակ, Լենինական, Երևան քաղաքներում: Գործել են արտադրական ձեռնարկություններ, արտադրվել են հյութեր չիչխանի յուղ և այլ արտադրանք, Կամոյում, Մարտունիում և այլուր: Հայկոպի համակարգում գործում էր շինարարական տրեստ՝ տասնմեկ շինվարչություններով: Գործել է Հայկոպտրանսը՝ հազար երկու հարյուր մեքենաների պարկով: Ամբողջ ցանցում աշխատել է տասներկու հազար մարդ: Հայկոպն իր կազմակերպահրավական կառուցվածքով փայատիրական կազմակերպություն է: Մինչ օրս Հայկոպը Միջազգային սպառողական կոոպերացիայի ալյանսի անդամ է՝ անմիջական կապի մեջ՝ այլ պետությունների հետ

**Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

**Մթերումների համակարգի ձևավորման հրամայականը Հայաստանի  
Հանրապետությունում**

*Բանալի բառեր.* գյուղատնտեսություն, ագրարային քաղաքականություն,  
մթերումներ, տնտեսություն, տնտեսական զարգացում

Անկախացումից ի վեր Հայաստանի գյուղատնտեսությունը գտնվում է լրջագույն փորձությունների շրջանում: Տնտեսվարման նոր պայմաններում այդպես էլ չի ստեղծվել այն համակարգը, որը թույլ կտա լավագույնս օգտագործել գյուղի և գյուղատնտեսության ներուժը: Մեր համոզմամբ, նման համակարգի ձևավորման կարևոր քայլերից մեկը կարող է դառնալ մթերումների համակարգի ձևավորումը և իրական գյուղկոոպերացիայի կազմակերպումը, ինչն արդեն ընկալվում է լայն շրջանակներում:

**Tatul MANASERYAN**

**The impact of current trends of the world economy to ensure socio - economic security of the post-Soviet countries**

*Key words:* agriculture, agricultural policy, procurement, economy, economic development

Since independence, the competitiveness of agriculture in Armenia is one of the most serious problems. New economic conditions of public and private management have not yet formed a system which will allow to better use the enormous potential of agriculture. In our opinion, one of the most important steps in the development of such a system may be the procurement system and the real agricultural cooperation, which is already perceived in the wider community in Armenia.

**Татул МАНАСЕРЯН**

**Необходимость формирования системы закупок в Республике Армения**

*Ключевые слова:* сельское хозяйство, аграрная политика, закупки, экономика, экономическое развитие

С момента обретения независимости, конкурентоспособность сельского хозяйства Армении является одной из самых серьезных проблем. Новые экономические условия хозяйствования так и сформировали систему, которая позволит лучшим образом использовать огромный потенциал сельского хозяйства страны. По нашему мнению, одним из наиболее важных шагов в развитии такой системы может быть система закупок и реальной сельскохозяйственной кооперации, которая уже воспринимается в широких кругах общественности.